


ՎՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ	համար
Տարեկան	12 Ձր
Վնասուանայ	6 "
Արտասահմանի	
համար տարեկան	15 "
Վնասուանայ	8 "

Անկերիկայի	համար
Տարեկան	3 ՏՐ.
Վնասուանայ	1.50 "

Մանուցման տար ասու
 զին երեսին համար 40 ս.
 իսկ վերջին երեսին հա-
 մար 20 սակերիս է. երե
 հին անցիկ անգամներու
 համար 20 0/0 զեղչ կրու
 լայն

Վառնայի համար ձևով 10 սակերիս



ՎՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂՎԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ՇՐ ԵՐԱՆՈՒԹ ԶՈՐԵՔԵՍԱԹԻ ԵՒ ԵԱՐԱԹ ՕՐԵՐԸ

R. P. Kalemearian, Mechitharistengasse
 (Austria) W. 4.

Աստիճակի վրա գրված
 Վնասուանայի համար

Редакция на вѣстникъ
 „Шаржумъ“
 Варна

Redaction du journal
 „Charjoum“
 Varna (Bulgarie)

Արտասահմանի համար
 ձևով
 (20 ՍԱՆԹԻՄ)
 Պուշկարիոյ համար
 ձևով
 (15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք ևս չեն տրուիր

ՎՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹ ԵՒ ԵԱՐԱԹ ՕՐԵՐԸ ԳԵՏԻ ԵՒ ԿԱՆԻՄԿ ՎՃԱՐԻ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ

Ձրկայ աւելի գերագոյն և սրբա-
 զան ազգայակ մը, քան «հայրե-
 նիքի համար»ը: Հազիւ շրթուն-
 քէն դուրս սողագած՝ լոյսի արա-
 զութեամբ կը թափանցէ մար-
 դուս սիրաւը, և սրտերէ սրտեր
 ու հոյիներէ հոգիներ վայրկե-
 նաբար անցնելով կը միացնէ,
 կը կոէ, կը գինովցնէ ամբոյր.
 որ ցուլական կատաղած խուժա-
 նի մը պէս «պատրաստ ենք» կը
 մտնէ:

Ձրկայ նոյնպէս ուրիշ առա-
 քինութիւն մը և սէր մը, որու
 համար մարդը՝ նախապատմա-
 կան շրջաններէն մինչեւ մեր
 քսաներորդ դարը, այնքան անձ
 նուրացօրէն արիւն թափած ըլ-
 լայ և հերոսական մաքառումնե-
 րու մատնուած, որքան հայրե-
 նիքի գաղափարին. հայրենիքի
 սիրուն համար: Եւ ժողովուրդի
 մը ուժը, ո՛չ թէ անոր տիրա-
 պետած սահմաններու, ունեցած
 զօրքի կամ թնդանօթներու մէջ
 կը կայանայ, այլ այն սիրոյ ա-
 ոռղղութեան, խորութեան և ան-
 կեղծութեան մէջ. զոր ան կը
 տածէ դէպի իր հայրենիքը:

Ժողովուրդ մը կամ ազգ մը,
 այն երկրի հետ, ուր սերուած է,
 և որու հետ յիշատակներով ու
 շահերով կապուած է, եթէ չըզ-
 թայտած չէ աննենդ և խորունկ
 սիրով, եթէ հայրենիքի անունը
 լսելու պահին չանցնիր իր հոգիի
 միջով հայրենասիրութեան նուր-
 րական սարսուռը, ապա այդ ժո-
 ղովուրդը կամ ազգը, որքան ալ
 հզօր ըլլայ՝ գատապարտուած է
 ճակատագրական ջնջումի և կամ
 յաւիտենակն ստրկացումի:
 Մանաւորապէս այս շարքին կը
 պատկանին այն ժողովուրդներն
 ու ազգերը, որոնց մէջ հայրե-
 նիքի գաղափարը կամ կը բացա-
 կայէ, և կամ շատ երկրորդական
 տեղ մը կը բռնէ. և որոնք յայտ-
 նի են պատմութեան մէջ աստ-
 ուածպետական (թէ՛նկրատ) ժո-
 ղովուրդներ անունով, օրինակ

հրէաներն ու թուրքերը:
 Ահա հրաշալի օրինակներ մեր
 ըսածներուն: Երկու հզօր ժողո-
 վուրդներ, որոնք շնորհիւ հայ-
 րենիքի գաղափարի և սիրոյ բա-
 ցակցութեան, առաջինը, եթէ
 ոչ սրով ու հրով՝ բայց ձուլման
 գործողութեամբ՝ բնաջնջման,
 և երկրորդը աստիճանական ան-
 դամահատութեամբ ստրկացումի
 են գատապարտուած:

Ձրկայման գրեթէ նոյն, և
 երբեմն նոյնիսկ պակաս աստի-
 ճաններու վրայ գտնուած ուրիշ
 շատ աննշան ո՛չ թէ ժողովուրդ-
 ներ, այլ փոքրիկ ցեղեր կրնան
 մատնանիչ ընել յեղափոխութիւն
 ներ ու պատմութեան թիւերը ի-
 րենց հայրենիքի բարօրութեան
 համար, սակայն այդ վերոյիշեալ
 երկու ահագին ժողովուրդները
 մէկ կաթիլ արիւն անգամ թա-
 փած չ'ունին այդ ճամբուն վը-
 րայ... Եւ հետեւանք այն է, որ
 այդ պատիկ ու աննշան ցեղերը
 կ'ապրին, իսկ ահագին ու տի-
 րող ժողովուրդները կ'անէանան:

Վերջապէս հայրենիքի սէրը
 բացի իր բարոյական կողմէն,
 ունի նաեւ իր դրակները, այսին-
 քն թէ՛ ոչ թէ միայն պէտք է սի-
 րէ հայրենիքը իրրեւ սրբազան
 աւանդութիւններու, յիշատակ-
 ներու և պատմական անցքերու
 խորան մը, այլ և իրրեւ անձնա-
 կան շահերու և բարօրութեան
 միակ ու յաւիտենական ազբեր
 մը: Եւ ինչպէս որ դրամը երկու
 երես ունի, և զայն շրջաբերե-
 լու համար անհրաժեշտ է, որ
 երկու երեսներէն ո՛չ մէկը զլա-
 ուած չ'ըլլայ, այնպէս ալ հայ-
 րենասիրութիւնը կ'ըլլայ առողջ
 և խոստումնալի, ու հրապարակի
 վրայ ալ կ'անցնի, երբ այդ սէ-
 րը կազմուած ըլլայ թէ՛ բարո-
 յական և թէ՛ նիւթական տար-
 րերով: Դժբաղդաբար առհասո-
 րակ ամէն մէկ ժողովուրդի մէջ,
 մանաւանդ երբ ան հպատակ է,
 շատ չնչին տոկոսն է, որ ունի
 անշահախնդիր սէր դէպի իր
 հայրենիքը, մինչդեռ մարդկու-
 թեան 99 տոկոսը, սկսած վայրե-

նի շուրուէն մինչեւ քաղաքակր-
 թութեան Ռահվիրան ամէ՛ն քայ-
 լին շահ կը փնտռէ՝ հետեւելով
 զուտ մարդկային բնազդին: Սն-
 շուշտ այս բնազդը ընդհանուր
 մարդկային ըլլալով չէ կարելի
 գայն «անբարոյական» անուանել,
 բայց անբարոյական է և ապուշ
 այն անհատի վարմունքը, որ
 պատկանելով այս կամ այն ժողո-
 վուրդին, ո՛չ իր հայրենիքը իը-
 րեւ պաշտամունքի վայր կը նկա-
 տէ և ո՛չ ալ զայն շահի աղբիւր:
 Այս անբարոյականութիւնը աւե-
 լի կը շեշտուի, երբ հայրենիքը
 վտանգի մէջ կը գտնուի: Պարա-
 գայ մը, ուր հայրենիքը պէտք
 ունի ամէն մէկ աշակցութեան,
 ամէն մէկ սիրոյ արտայայտու-
 թեան, ինչ որ ալ ըլլայ անոր
 շարժառիթը:

Հայրենիք մը վտանգէն ազա-
 տելու համար, անհրաժեշտ է,
 որ կեանքի ու գրպանի կոնցու-
 թիւնը ներգաշնակ միութիւն մը
 կազմեն, անհրաժեշտ է, որ հայ-
 րենիքի ծոցին մէջ փառքի գե-
 րեզման մը ցանկացողին քով ա-
 զաս հայրենիքի հողին վրայ
 գործարան ու պալատ ունենալ
 ցանկացողներ գտնուին, որոնց
 երկուքն ալ իրենց հայեցակէտ
 ներով բնական են և օգտակար
 հայրենիքին համար: Այսպէս
 գիտցեր են վարուիլ բոլոր ա-
 զատուած ժողովուրդներն ու ազ-
 գերը. գիտցան այսպէս վարուիլ
 մեր ժամանակակից պատմութեան
 մէջ Պալգանի ժողովուրդները և
 նոյնիսկ ցածհոգի նոր յոյները:
 Միայն հայն է, մերինը, որ պա-
 տահած ժամանակին փարիսեցիա-
 կան հովեր կ'առնէ ինքզինքը
 բոլորէն առաքինի և ազնիւ
 յայտարարելու, միայն հայն է,
 հայ գրամատէրն ու վաճառակա-
 նը, բացառութիւնները մի կողմ,
 որ ո՛չ բարոյական և ո՛չ ալ նիւ-
 թական սէր կը տածէ դէպի իր
 հայրենիքը: Այդ անտերբերու-
 թիւնը դէպի թշուառ հայրենիքը
 աւելի նողկալի, աւելի հրէշային
 և զայրացուցիչ կը դառնայ՝ աչքի
 առաջ ունենալով Հայաստանի

անզուգական ճակատագիրը. ճա-
 կատագիր մը, որու վրայ ծովե-
 րով բաժնուած օտարները լացին:
 Սակայն շնորհիւ այն առիւծային
 սրտերուն ու քուրմական պաղա-
 րիւնութիւններուն, որ ունին
 անշահախնդիր հայ հայրենասէր-
 ները, չեն թողած, չեն լռուոր
 ու չը պիտի թողուն որ անպատիժ
 մնայ այդ զազրելի անտարբերու-
 թիւնը: Դաշոյնները շողացր են
 մխուեր անոնց մարմինն մէջ
 հայրենիքի՝ համար, կը շողան
 հայրենիքի՝ համար, և պիտի շո-
 ղան հայրենիքի՝ համար... Ա-
 հաբեկիչի դաշոյնը դարձած է
 ամենանուիրական դրօշակը, և
 եթէ կտրուի գայն բռնող քաղու-
 կը, մէկի տեղ տասը պիտի բար-
 ձրանան զայն բռնելու հայրենի-
 քի՝ համար:

Այդ դաշոյնները չը պիտի թոյլ
 տան, որ հայ անտարբերութիւնը
 շարունակէ իր ազգասպան ըն-
 թացքը, օտարի շեմբերն ու
 ձեռքերը ստրկաբար լիզելով, ու
 իր հարազատներու գերեզմաննե-
 րուն վրայ խոնարհ հպատակու-
 թեան թափօրները կազմելով:
 Այդ դաշոյնները պիտի շողան ու
 մխուիւն անոնց վագրային սրտե-
 րուն մէջ յանուն հայրենիքի հա-
 մար ընկածներուն, այրիներուն
 ու որբերուն, և մանաւանդ յա-
 նուն հայ ազատագրութեան: Այդ
 դաշոյնները պիտի մղեն զանոնք
 դէպի ճշմարիտ ճամբան, դէպի
 հայրենիք և անոր կոյս հարստու-
 թիւններու շահագործումը, աւե-
 լի պատուաւոր, աւելի ազատ և
 աւելի շահաւոր: Դաշոյնը անոնց
 համար այն ճշմարիտ ապագայի
 անխաղախ խորհուրդն է, զոր
 սիրող հայր մը իր անփորձ զաւ-
 կին կուտայ, եւ եթէ կայ Աստ-
 ուած, և եթէ աս ճշմարտութեան
 ու ազատութեան Աստուածն է,
 ապա ան ո՛չ թէ պիտի անիծէ ա-
 հաբեկիչին քայլը իր մտադրու-
 թեան ճամբին, այլ իր հայրա-
 կան հովանին պիտի տայ անոր:
 Իսկ մահէն յետոյ պիտի համբու-
 րէ այն քաջին ճակատը, որ գիտ-
 ցաւ փառաւոր մահով մը կեանքը
 նուիրել հայրենիքին համար:

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՊՈՒՆԿՈՒԹՅՈՒՆԸ
ՄԵՐ ՄԻՋ
I

Անցեալ տարի այս միջոցներն հրատարակեց ուսաց կայսեր այն օրէնքը որ հայկական եկեղեցու դրամական անտեսական և կարածական մասի կառավարութիւնը իւրում էր նոցա տէրերի ձեռքից և յանձնում ուս չիւնողներին:

Հայը և մասնաւորապէս ուսահայը՝ որ շարունակաբար տարիներ ընթացքում լուծեցաւ համբերել և տարել է շատ այդ տեսակ և դորանից աւելի ուժեղ բռնաբարութիւնը ուս կառավարութեան կողմից, այս անգամ այլևս չհամբերեց: Բաժանել լցւած էր նա բողոքեց և բողոքեց շրջած սաստկութեամբ և սարածութեամբ: Իւր բողոքի միայնում ուս կառավարութեան արտայայտութեան սաստկութեամբ օրինակ հանդիսացւում էր անգամ ազգերին, ծախարեց ամբողջ աշխարհից և հետոս զգում կանանքը տիրացաւ, անցաւ ժամանակ, դադարեցին ցոյցերը, բանտելը լցւեցին հարիւրաւոր բանտարկեալներով, քաղաքները դատարկեցին ինտելիգէնտ, առաջնորդող և լաւ երիտասարդութիւնից և ուղարկեցին Ռուսաստանի անհիւրընկալ կողմերը սքտոր:

Սկսեց պատերազմը: Ռուսաստանի ամեն կողմերում ուս ազգաւ մոլեռանդ և ստրկացած ամբողջ համակրական ցոյցեր էր կատարում, պատերազմի ստիւիւ: Քաղաքային վարչութիւնները և քաղաքագլուխները, որպէս զի դուր գան կառավարութեանը մրցում էին իրար հետ յօգուտ պատերազմի սրած ընծայաբերութեամբ:

Իս մի փորձաքար էր հայերի համար: Կովկասումն էլ զանազան ազգու-

թիւներ կատարեցին ստիւիւնութեան զրգամբ համակրական ցոյցեր: Թէ կառավարութիւնը և թէ միւս ազգութիւնները սպասում էին հայերից հակակրական ցոյցեր:

Այդ, արամբարութիւնը այդ էր պահանջում, բայց աչքի առաջ ունենալով թէ կառավարութեան և թէ ուս ժողովրդի յուզած գրութիւնը թոււ էր, որ մի սեռայի համաայնութիւն է կայացել բոլոր հայերի մէջ լուծեալ և անտարբերութեամբ անցկացնել այդ սեղոնը: Եւ այն ժամանակ, երբ Ռուսիայի վրացիները, օրինակ վերցնելով հայերից փոխանակ համակրական հակակրական ցոյցեր էին անում կառավարութեանը գողալով կողմի միապետութիւնը, կեցցեն Հայերը, կեցցեն Ճապոնացիք, այդ ժամանակ այդ նոյն հայերը Բագում, այն եկեղեցու պատերի առաջ, որտեղ մի երկու ամիս առաջ թափել էր հայ երիտասարդութեան ամենալաւերի արիւնը կատարում էին մաղթանք այն զօրքի յաջողութեան համար, որ այդ եղեռնագործութիւնն էր կատարել, և ուսաներ էր կանչում, որի հետեանք եղաւ ուսմբի պայմում և մի շարք նոր զոհեր: Այդ միջոցներն էր, որ կարում մի կողմից դատարանը ցուցարար քահանայներին և երիտասարդներին դատում և զատապարտում էր տարիներ բանտարկութեան, իսկ միւս կողմից այդ քահանայների ընկեր հոգեւորականութիւնը կայարանում մաղթանք կատարելով ճանապարհ էր ձգում զօրքին դէպի պատերազմ, և հայ ժողովուրդը շտեմեւած համախմբումով դրօշակներով մուգիկալով եկեղեցուց դէպի նահանգսպետ էր գնում յայտներու իւր խոնարհ հպատակութեան զգացմունքները: Եւ երբ բացարձակութիւն ես պահանջում այդպէս վարչապետի պատասխանում են թէ պաքաղաքականութիւն է, պոլիտիկայ է

Ոչ, դա քաղաքականութիւն չէ, դա արտայայտութիւն է մեր հոգու ցածութեան: Դա քաղաքականութիւն չէ, այլ քաղաքական պոռնկութիւն: Մենք համաայնութիւն կապելով իրար հետ ծախարեց կարծեցեալ հանգստութեան համար մեր պատիւը, հայհոյեցինք բանտարկեալներին և աքսորեալներին, սրբապղծեցինք նահատակներ թարմ գերեզմանները:

(Շարունակելի)

ԲԱՌՈՒԼ ՔՐԻՒԿԵՐ

Հեռագիրները գոժեցին սրգէն թէ՛ Քլաւանի (Եվէյցարիա) մէջ հանգիստ մահով մը վաճառներ է Բաուլ Քրիւկերը՝ Թրանսկալի նահապետ խազանը: Ժամանակակից պատմական գէւքերէն թիւրքու ամենէն հետաքրքիրն ու ամենէն ողբերգականն է մանաւանդ, որ համաշխարհային բնութեամբ թողու՝ յախտեալ միայն իր մեծագոյնը: Բաուլ Քրիւկերը շատ սահմանափակ զօրքացումով գիւղացի մէջր բայց ան ունէր խորունկ ու առաջ սիրտ մը, որ մինչեւ վերջին գորիւր իր ժողովուրդին համար զարկաւ: Իր իսկ ձեռքերեցութեամբ ասալ եկած Ռիբիկեան այդ համարապետութիւնը, անշուշտ աւելի անհեղք և խելագի կատալիսիւ մը չէր կարող ընտրել քան Քրիւկերը, որու ապացոյցը այն եղաւ, որ անգլիացիներու զէմ մղած պատերազմի ատեն՝ Քրիւկերը արդէն երրորդ անգամ ըլլալով նախագահ էր ընտրուել:

1900 թուի, երբ ան յուսահատուած թողեց Թրանսկալը, այդ ո՛չ թէ վախէն էր, այլ կը կարծէր թէ իր ներկայութեամբ պիտի կարողանար եւրոպայի ուշադրութիւնը հրաւիրել իր հերոսական հայրենակիցներ

ուն ճակատագրի վրայ որոնց վրձնակառուութիւնն ու հայրենասիրութիւնը հիացմունքի մէջ էր դրել ամբողջ աշխարհը:

Այդ կիսով չափ յաջողեցաւ իրեն. Փարիզի և Բեռլինի մէջ ժողովրդական մոլեգին խանգավառութիւններ առաջ եկան, սակայն քաղաքական շրջանակները ցուրտ մնացին, նոյնիսկ անտարբեր: Իսկ Եւրոպայի Սուլթան Վելիյեմ Բ. թմբեց նոյնիսկ Քրիւկերը ընդունել:

Քրիւկերը այնու Թրանսկալ չը մտաւ, ստիպուած չըլլալու համար անգլիական տակուսութեան երգումը առաջինը իրեն համար, ուստի շարունակեց մնալ Եւրոպայի մէջ քաղաքում յուսակեաց: մինչեւ որ զարգոյթն զառնացած հոգիով ու հայրենիքի տառապանքէն կծկած արտով իրագերեզման:

Քրիւկերը ցանկութիւն յայտնելով միշտ թաղուելու Թրանսկալի մէջ իր սիրած կնոջը քով, և ինչպէս հետագիրները կը տեղեկացնեն, անգլիական կառավարութիւնը այդ թոյլտուրբ է:

Քրիւկերը կ'անմահանայ այսօր, ոչ միայն Պօլը ժողովուրդի, այլև ամբողջ աշխարհի համար, տյա աշխարհի ուր այնքան փոքր էր ծնին Քրիւկերները:

ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԸՆՏՐԵՃԷՔ ՈՐԸ ՈՐ Կ'ՈՒՅԻՑ

Ձիւլակի հոգաբարձութիւնը շատ ոչ մնացած է ուսուցիչներ փնտելու գործին մէջ, ևրբ արդէն միկն յուլիս 15 օրէնքին տրամադրութեան

ԽՂՃԻ ԵԿԷՐ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

«Արդեօք մեզ պէտք է սպանեն, պիտի հաշմանդամեն, այնտեղ, ինչ որ իւնամպոյում. ո՛ր պէտք է տանեն մեզ — դատում են գնալողները, դեռ յայտնի չէ. կարելի է թէ ողջ եւ առողջ դուրս գանք. դեռ մեզ համար հանդէսներ էլ կը սարքեն վերադարձին, ինչպէս այն նաւային զինւորներին համար, որոնց պատին այսօր Ռուսիայում հանդէսներ են սարքում, որովհետեւ ճարտական ուսմբերը եւ գնտակները նրանց չեն հանդիպել, այլ նրանց ընկերներին: Բայց եթէ հրաժարվենք զընալու, անկասկած մեզ կը բանտարկեն, կը տանջեն, քաղցով, կը ծեծեն, կաքորեն Եակուտի նահանգը, կամ թէ մի անգամից կը սպանեն»: Եւ յուսահատ սրտով սրանք թողնում են լաւ, բանաւոր կեանքը, թողնում են կանանց, երեխաներին եւ գնում: Երեկ ես հանդիպեցի մի պահեստի զինւորի, որին ճանապարհ էին գլում մայրը եւ կինը: Երեքն էլ սայլի մէջ էին: Ձիւնորը մի քիչ տիրամած էր. կնոջ զէմքը արցունք ներքից ուռել էր. զինւորը դիմեց ինձ.

—Մնաս բարով էլի Նիկոլայե վիչ Թայրագոյն արեւելք եմ գնում, —էհ, պէտք է պատերազմես:

Նա խորատու զվեց մտքերի մէջ. — ինչպէս կարելի է. բայց վերջը ո՛ր կարող եմք մտնել:

Ես տեսայ որ նա ինձ հասկացաւ, այսինքն գործը, որի համար նրան ուղարկում են վատ գործ է:

«Ուր կը մտնեմ — այդ ճիշդ արտայայտութիւնն է, այն հոգեկան վիճակի, որը պաշտօնական եւ լրագրական աշխարհում թարգմանում է հաւատարմի ծարի եւ հայրենիքի համար նրանք, որոնք անթիւ թողնելով իրենց ընտանիքներին գնում են դէպի տանջանք եւ մահ. ստում են այն, ինչ որ զգում են. սուր իրենանք: Իսկ նրանք, որոնք գրեց փառաւոր պալատներում նստած են վտանգներից զերծ, յայտարարում են որ բոլոր ուսաները պատրաստ են իրենց կեանքը զոհել պաշտելի վեհապետի համար. Ռուսիոյ մեծութեան եւ փառքի համար:

Երեկ ես մի ծանօթ գիւղացուց երկու նամակ իրար ետեւից ստացայ: Ահա առաջինը.

«Սիրելի էլի Նիկոլայե վիչ ահա, այսօր ծառայութեան կանչող տուսակը ընդունեցի, պէտք է որ վաղը ներկայ լինեմ համախումբան տեղում: Այժմ այս է ամեր, իսկ յետոյ հետո. Թայրագոյն Արեւելք ճարտանցիներ զնտակների զէմ: Իմ վշտիս եւ ընտանիքիս զգոհութեան մասին ձեզ ոչ ինչ չեմ ասում. միթէ դուք չէք հասկանայ իմ վիճակի սարսափելիութիւնը ամբողջովին. ինչպէս

եւ պատերազմի սարսափները: Այդ յորտը դուք վաղուց կչած էք եւ ամեն ինչ հասկանում էք: Բայց որչափ կողքի գալ ձեզ մօտ խօսելու համար, ես ձեզ մի մեծ նամակ եմ գրել: ուր հանդիսացրել եմ հոգուս տանջանքները, բայց չը կարողացայ արտագրել իրք ստացայ թեկնելու յայտարարութիւնը: Ինչ պէտք է անել կինը չորս երեխաներով միասին. դուք իբրեւ ծեր մարդ, իհարկէ անկարելի է որ հետաքրքրէ իմ ընտանիքի վիճակով. բայց կարող էք ձեր բարեկամներից մէկին խնդրել, որ գայ մեր տունը: Եւ այնպէ իմ որբացած ընտանիքին: Ես սքրտաանց խնդրում եմ ձեզ, եթէ իմ կինս իր չորս երեխաներով չը գի մանայ տունջանքներին եւ վճռէ գայ ձեզ մօտ խորհուրդ եւ օգնութիւն խնդրելու. նրան ընդունեցէք եւ մը խիթարեցէք. կինս թէեւ ձեզ անձամբ չէ ճանաչում. բայց ձեր խօսքերին հաւատում է. իսկ այդ մեծ նշանակութիւն ունի:

Ձիւնորակութեան հակառակել ես չեմ կարող, բայց դեռ այս լու պէից կասեմ որ ճապոնական ոչ մի ընտանիք իմ ձեռքով չի որբանայ: Աստուած մի այս ամենը որչափ սարսափելի, ծանր եւ ցաւալի է նետել ամենը որի հետ ապրում ես եւ որով հետաքրքրվում:

Երկրորդ նամակը այսպէս է. «Սիրելի էլի Նիկոլայե վիչ, Ձիւնորական ծառայութեանդ զոհ մի օր

միայն անկաւ. իսկ ես արդէն տանջանքների մի ամբողջ յախտեալստութիւն ակրեցի: Անաւտեան ժամի Ցից մինչեւ երեկոյան 9 օր մեզ անատունների հոտի պէս զօրանցի բակում այս ու այն կողմ էին քրչում: Երեք անգամ կրկնվեց մարմինների քննելու կոմէդիան. Եւ ամենը նրանք, որոնք ստում էին թէ հիւանդ են 10 րոպէի ուշադրութեան անգամ շարժանացան եւ նշանակվեցին իբրեւ սպեցիալաններ: Երբ մեզ այս տարիքների մէջ երկու հազար հոգիներին, զինուորական վարչապետի մօտից բռնեցին դէպի գորտնոց, փողոցի վրայ. մի վերստ երկարութեամբ կանգնած էր շարք ազգականների, մայրերի, կանանց, երեխաները գրկելու, եւ եթէ զուք տեսնելիք ու լսելիք թէ ինչպէս նրանք սեղում էին իրենց հայրերին, տյրերին, զաւակներին եւ կախվում նրանց վզերից, յուսահատաբար հեկեկալով: Ես առ հասարակ զսպված եմ պահում ինձ եւ կարողանում եմ սանձահարել զզացու մեծութայց ես էլ չը կարողացայ գիտնալ եւ լացի...»

(Լրագրական լեզուով սա կրչվում է հայրենասիրական զգացումների խոչոր բարձրացում): «Ո՛րք է այնչափ որով կարելի լինէր չափել այս ազգակալի վիշտը, որի մէջ համակած է գրեթէ աշխարհիս երոգը մարտիսկ մեռնք. մենք հիմա թնդատեթի համար մտեր ենք, որ կշտապեն կարճ

համապատասխանող ընտրուած ուսուցիչներուն անունները կը պահանջուի...

Մեր հոգաբարձու թեան զազգար Ս. Ետարանի սխմար կուսանքոր կը յիշեցնէ ինձի, եթէ սակաւին «աշգրտ» պուկի խողը ենթագրելու ասիթը չընծայեր...

Շիտակը խօսելով հոգաբարձու թեան անկէ հարց տե՛ք ի՞նչ բան ապրելով միամտութիւն պիտի ըլլար...

Ամիսներ ատաղ ըսած էի որ, եթէ հոգաբարձու թեանը գործիք ըլլայ հին կիրքերուն — հետեւանքը միասակար կ'ըլլայ: Իրողութիւնը մէջտեղն է հիմա:

Այսօր ալ ստիպուած եմ կրկնել որ, ո՛չ-խնչացի կարգադրութիւն մը կըրտանայ ալ աւելի ո՛վ մնասն ինչ ղողունը անհնչու, դարձանի մը վրայ մտածելու ստիպուած եմք:

Կը հարցնեմ. ինչպէս պիտի վարուին Ֆիլիպի վարժարանական ասկիւնը իբր թէ լուծուեալ աշխատող օժանդակող հրաւիրեալ (թէ քիչ մը քանակաւ կ'արդար մեր քանի մը ազգայինները, որոնց մէջէն իրենց խորհուրդներով և անկեղծութիւնով օգտակար ըլլալիք մէկ-երկու ազգայիններ իրենց բացակայութեամբ պատուեր են աս վարժարան կ'ընդունան գործին վրայ մտածուելիք ժողովը:

Ինչպէ՞ս պիտի վարուին:

ժամանակուս գոհարերէ վրէժխնդրութեան և սարսափի աստուծուն...: Ենս ոչ մի կերպ չեմ կարողանում իմ ներքին հաւատարակութիւնը վերահաստատուել: Որչափ ինձ ատուած եմ ևս այդ երկու նութեան համար, որք արգիլում է ինձ ծառայել մի սիրով և մի Աստուծո...:

Այս մարդը դեռ բոլորովին չէ հաստատու որ սայսափելի չէ այն որ մարմինն է ունեցանում, այլ որ ունեցանում է թէ հոգին և թէ մարմինը: Կրա համար էլ չէ կարողանում հրաժարուիլ, Բայց թողնելով իր ընտանիքը դեռ առաջնայ իստատանում է որ իր միջոցով ոչ մի անպակաս ընտանիք չը պէտք է որբանայ, ևս հաւատու է Աստուծու մեծ օրհնքին, բոլոր դաւանանքներին օրհնքին: — յուրիշներին հետ վարվելու պէտք այնպէս: Ինչպէս ցանկանում ենք որ վարվեն մեզ հետ» և ևս այդ տեսակ մարդիկ մեր ժամանակուս երբ ինչ թէ շատ գիտակցաբար ընդունում են այդ օրհնքը, ոչ միայն քրիստոնէական, այլև բողոքական, մահմադական, կոնֆուցիոսի և բրահմանական աշխարհում հազարներով չեն, այլ միլիոններով:

Կան ճշմարիտ հերոսներ, ոչ նըրանք, որոնց այժմ այդ տիտղոսն են տալիս, որովհետեւ նրանք, որ ինչ-նչերին սպանելու օգնելով իրանք ողջ են մնում, այլ իրական հերոսներ, որոնք հիմա յետոս են բանտերում և Եսկիւտի նահանգում, որովհետեւ

Մենք չունինք պուրիտանական հայ ապրող, հայ խորհող և հայ կըրթող ուսուցիչներ: Կուտարար եթէ կառավարութեան պահանջը գոհացնելու աշխատինք, ամեն բանէ առաջ մենք մեզ և մեր սերունդը չի պիտի կրնանք գոհացնել:

Այս պարագային ստիպուած եմք ամէն ճիգ թափել կառավարութեան բարեացակամութիւնը խնդրելու և ձեռք բերելու:

Ի այց ատ լանը ընելու համար մենք նախկին սխմարներով պէտք չէ որ ներկայանանք հոն:

Ֆիլիպի մեր յիշեալ ազգայինները նախ միանգամ ընդմիջտ պէտք է լուծեն ներկայ ուսուցչական կազմը, այլևս չի վերընտրելու պայմանով, և պաշտօնի կանչելու են կամ արտասահ/անէն կամ գոնէ Պուկարիոյ մէջ գտնուած կարող ուսուցիչներէն մէկ-երկու հատ մնացածները լրացնելով ադ ուսուցիչներուն համաութեամբ ու գիտութեամբ:

Եւ ուսուցչական աս նոր ու կարող կազմով ներկայանալ որ որ պէտք է ու անոնց թողուել թիւեր խնդրել:

Հակառակ պարագային, եթէ ներկայ ուսուցչական կազմով ներկայանանք, նախ կառավարութիւնը արգէն գիտնալով որ ծագած վարժարանական աս խնդիրներուն մէջ պատասխանատուութեան բաժին ունի ներկայացուած ուսուցչական կազմը կամ անոր գլուխը, պիտի չընդունի և կամ դիտողութեան տեղի պիտի աըրուի: Եթէ նոյնիսկ թափուած ճիգերու շնորհիւ ընդունելի ալ տրուի — ինչ որ քիչ մը անհաւատալի կը թուի — ապագային աս ուսուցչական կազմին գէ՞տ տեղացող բողոքները, կուրծքը պատճառ պիտի ըլլան որ աւելի գէշ հետեւանքներ ծագին, շատ աւելի խիստ ու անխախտ պայմաններ տըրուին:

Մինչդեռ նոր ու կարող ուսուցչա-

նորդակի հրաժարուի են մտնել մարդասպանների շարքերի մէջ և մարտիրոսութիւնը գերազանց են Գրիստոսի օրհնքի դէմ դաւաճան լինելուց, Կան ևս այնպիսիները, ինչպէս ինձ գողը, որոնք կեթեան, բայց չեն սպանիլ Բայց այն բազմութիւնն է որ գնում է ասանց մտածելու իր անելիքի մասին, արդէն իր սրտի խորքում զգում է ի՞նչ որ վատ գործ է կատարում, և որ հնազանդում է իշխանութեան, որը իրանց խում է աշխատանքից և ընտանիքից և ուզարկում հոգուն և հաստին անհաճելի ու անպէտք մարդասպանութեան: Բայց նրաք գնում են, որովհետեւ սման կողմից կապկապած են այնպէս, որ չը գիտեն քի ու Վալը մտնեն:

Իսկ նրանք որոնք մնում են, ոչ միայն զգում են, այլ գիտեն այդ և արտայայտում են:

Երեկ ես մեծ ճամբի վրա գիւղացիների սեսայ, որոնք մէկ մէկ վերադառնում էին Տոսոյայից: Նրանցից մէկը իր սայի կողքովը քաղալով ինչ որ թերթ էր կարդում:

— Ի՞նչ է այդ, չարքի և, հեռագիր է՞:

Նա կանգ առաւ պատասխանելով — այս երեկվանն է, այսրվանն էլ կայ:

Ու գրպանից հանեց միւսը: Մենք կանց առինք. ևս կարդացի:

— Երեկ տեսէիր թէ ինչ էր ներկայացում կայարանը, հրաչք է կր-

կան մարմինով մը ներկայանալու պահուն, թեքուս կառավարութիւնն ալ աչք գոցէ:

Չգալով որ արդէն ճարժոււմ պէտք եղածն աւելի տեղ տուաւ Ֆիլիպի վարժարանական աս խնդիրներուն, ասով վըակէտը կը գնեմ և ապէեք կը բաւականանամ արձանագրելով միայն իրողութիւններն ու անունում քայլերը:

Կերջապէս կարծ խօսքով — «անհասներ ապրեցներու մտահոգութեան և հին կիրքերուն պիտի զոհուի» ամբողջ սերունդի մը ապագան (ինչպէս որ գէշ երեւոյթներ ատից այց կուտան) թէ՛ խելացի կարգադրութիւնով մը չարիքին առջեւ պիտի առնուի:

Ձեռքերնիդ խղճեմուդ վրայ դրեք և ընտրեցէ՛ք որը որ կ'ուզէք:

Թղթակից

Ֆիլիպի

ՊՐՏ—ԱՐԹՈՒՐԻ ՄԷՋ

—)o(—

Պօրտ Արթուրի ուսանելու մէջ մեծ իրարանցում կայ չինացի երկրաչափ Ծօի անյայտացումով:

Այս երկրաչափը, որ Պօրտ Արթուրը Ռուսներու ձեռքը ընկնելու օրէն ի վեր Ռուսներու ցանկութեամբ այդ բերդաքաղաքը ամրացնելով էր զբաղած, և շատ մեծ յարգանք ու համակրութիւն էր գտած ուսական բարձր շրջանակներէն և արժանացած անոնց ընկերութեան, ներկայ պատերազմի պատճառով պաշտօնանկ էր եղած առանց պատճառի: Ռուսները՝ սկսած ամենամեծ պաշտօնեայէն մինչև ամենապերջին բանուրը, սկսեցին անտարբերութեամբ և նոյն իսկ կոպտութեամբ վարուիլ անոր հետ: Երկրաչափ Ծօի այս րաներուն չը դիմանալով՝ յաջողեր է ներ, երեսներ, հազարից աւելի, աղվախոյ շրջապատել են զնոցը և չեն ուզում թողնել որ շարժուի:

Դրսի մարդիկ այդ տեսնելով լաց էին լինում: Մի Տոսոյի կին տեղն ու տեղը մեռաւ, հինգ երեսներ թողցն: Երեսներին լցրին մանկանց ապաստարանների մէջ և հօրը տարան... Եւ ինչնեքիս պէտքն է այդ Մտնչուրիան, մեծ շատ հող ունենք, և որչափ մարդիկ ջարդեցին, ոչչափ դուռ վաճառեցին...

Այս, այժմ մարդիկ բոլորովին տարբեր են վերաբերում զկալի պատերազմը, քան 77 թ.ին: Երեք այնպէս չէ եղած, ինչ որ այսօր է լինում:

Թերթերը գրում են թէ ծարի այցելութիւնների միջոցին, որը գնում է մարդկանց հիպոնոզիս, որոնց ուղարկում են մարդասպանութեան: Ժողովրդի մէջ մեծ հրայնուց է առաջ գալիս: Իրականութեան մէջ, բոլորովին հակառակ է տեղի ունենում:

Ամեն կողմից լսվում են թէ ինչպէս այսինչ տեղում կախել են երեք պահեստի զինուորների, այնինչ տեղում երկուսին: այսինչ կինը առանց ամուսնու մնալով երեսներին տարել է զինուորական վարչութեանը թողել, իսկ մի ուրիշ կին զինուորական վարչպետի քակում ինքզինքը կախել է:

Ամենքն էլ դժգոհ են, մոսյլ, կատաղած, ճիւղատքի, հայրենիքի

փախչիլ Պօրտ Արթուրէն և կրուի թէ արդէն միացեր է բերդաքաղաքը պաշարող ճարտական բանակին:

Երկրաչափ Ծօի մարմամասնութեամբ գիտէ ամբողջութեանը գիրքն ու անոնց ուժեղութիւնը կողմերը, այնքան լաւ, որ կրնայ նոյն իսկ գիրքը ժամանակ աչքերը կապած ցոյց տալ ամբողջութեանը թող կողմերը ճարտական բանակին: Ասիկա Պօրտ Արթուրի մէջ մէկ միլիոն ռուբլէն աւելի արժող կալուածներ ունի:

Էնչ. Բուսիկ

Սուշապա 10/27 յուլ. 1904

Պատ. խմբ. «Շարժում» լրագրի վառնա

Սուշապի սրբ. եկեղեցեաց լուսարձական հայոց հոգաբարձութիւնն կը խնդրէ որ ներկայ գրութիւնը հրատարակելու շնորհ ընէք:

Վառնայի արժանապատիւ տէր Սարգիս Խարիպեան հայրը Ս. Պատրիարք հօր հրամանաւ և Վառնայի հոգաբարձութեան թոյլ տուութեամբ, խորհրդիս մասնաւոր հրաւերին համաձայն եկաւ քաղաքս, երեք ամիսէն աւելի մեղէ հոգեւորապէս մխիթարեց, քաջալերելով հայուութիւնը ամեն կերպով, գոհացուց իր հոգեշունչ դրական քարոզներով, մանաւանդ եռանդ տուաւ ամենքին որուն տպաւորութեան տակ գէթ միջոց մը պիտի մնայ փոքր գաղութս Սուշուաի:

Եւ ծարի համար խօսքերը, որհ ներգնդը և ուսանելը այլևս առաջվան նման մարդկանց վրա չեն ազդում. ուրիշ հակազդող մի կուր առաջացած անիրաւութեան զիտակցութիւնից և այդ գործի մեղքից, զէպի որը կոչվում են մարդիկ հետզհետէ տիրապետում է ժողովրդին:

Այո, մեր ժամանակի մեծ պատերազմը այն չէ, որը այժմ մղվում է ճակոտացիների և ուսանելի կամ այն որ կարող է բոցավառվել սպիտակ և զեղին ցեղի միջև. ոչ այն պատերազմը, որը մղվում է ականներով, ուսմանը կը զնգակներով, այլ այն հոգեկան պատերազմը, որը անդադար մղվում է պատրաստի որ չը արտայայտվի մարդկային լուսավորված գիտակցութիւնը, և ճշնող խաւարի միջև որ սեղմում են գիտակցութիւնը:

Քրիստոսը դեռ այն ժամանակ սպասելուց տանջվելով, ասում էր. «Ես եկայ երկրի վրա կրակ զնելու և որչափ կը ցանկայի որ բոցավառվէ» (ղուկ. 12 զլ. 49 հր)

Քրիստոսի ուղածը այժմ է կասարվում: կրակը բոցավառվում է չը հակառակները նրան, այլ ճառայներ:

Լ. Ն. Տօսոյ

30 ապրիլ 1904

Արդ մեր շնորհակալութիւնը հրապարակով կը յայտնենք Տէր Ա. Ղարիպեան հօր որուն ներկայութիւնը քաջալերանք է ուր որ գտնուի ինքը, իմի բան հայութեան պարծանք քահանայ է, ամեն կերպով բարեբազդ են անոնք որ միշտ իրենց քով կը գտնուի այս հոգեւորականը:

Տէր Խմբագիր կը խնդրենք այս սուգերը յայտարարէք Ձեր ազգագուտ թերթին մտակալ թիւերուն մէջ:

Յունիս 27ին տեղւոյս սուրբ Ստեփանոս եկեղեցւոյ մէջ յետ աւարտման Ա. պատարագի, հոգեհանգիստ կատարուեցաւ եկեղեցւոյ շրջափակին մէջ, ընդհանուր հայ նահատակելոց յիշատակին՝ նամանաւնդ անցեալ տարի, Գարսի մէջ ուսմբու արկածով պայթմամբ զոհուողներու: Տէր Պատարագի և Բաւնի փառաւոր ու յիշատակելի կուրիին մէջ նահատակուող հայ քաջերու նաեւ Սասնոյ՝ վերջին դէպքերու ատեն նահատակուող հայ Ֆեդայիներու ու ժողովրդի խնկելի յիշատակին համար, որոնք ի սէր փրկութեան նուիրական զաղափարին, իրենց կարմիր արեամբ ողողեցին մեր հայրենի բնագաւառի սարերն ու ձորերն, լեռներն ու դաշտերը, հոն թողլով իրենց ոսկերտութիւնը:

Եկեղեցին խուռն բազմութիւնով լեցուած էր. ամենքի դէմքը տխուր էր, բոլորին միաբէն պաղ սառուր մը կանցնէր: Հոգեհանգիստէն վերջ, Տիար Ալիքսան Տէմիրճի-պաշեան, որ կը գտնուէր քաղաքիս մէջ, ժողովրդին մխլթարանք մը տալու համար, ժամի մը շափ ճառախօսեց՝ և մէկ խօսքով հասկցուց թէ՛ ժողովուրդը պարտականութիւն մը ունի դէպի հայրենիք ուր ինքը շատ հեռու կը գտնուի իր մայր հայրենիքէն. մէկ խօսքով բացատրեց թէ, մենք պէտք չէ մեր սիրտը պաղեցնենք մեր սուրբ գրախտավայր հայրենիքէն և մեր կուռուքալ Ֆեդայիներէն, որոնք Ս. գործին համար կը զոհուին, և մենք ալ սիրենք զիրար և օգնենք այն քաջերին: Եւ ճառախօսք այս բառերով վերջացուց իր խօսքերը. «Ամէն տեղ մահը մի է բայց երանի այն մարդուն, որ ազատութեան կը զոհուի»: Բոլորը ծափահարութիւններով շնորհակալ եղան: Ժողովուրդը մխլթարուելով եկեղեցիէն մեկնեցաւ:

Մի քանի օրէն տեղւոյս Տէր Վաղինակ հայր հանգանակութեան պիտի ելլայ ի նուէր երկ-

րի կուռուցներու: Մի քանի օր առաջ Լօւնտօնի միթինկին տեղւոյս հայ գաղութի կողմանէ, հեռագրուեցաւ շնորհակալութիւն միթինկին որ գրուած էր ասպէս:

«Սիւրբէնի հայ գաղթականութիւնս. ձեզ կը յայտնէ իր երախտագիտութիւնը, այն լուխնամբնեցուն, զոր կը գործածէք ձեր կողմէ հայ և մակեդոնացի ընկենալ ժողովրդոց որ կը նեղուին շար մարգասպանի լուծէն»:

Մինչևս Ա. Մայսուրեան 1904 Յունիս 1 Ալիլիկի

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՒԷՐ

Ի ազական Սորհորդս ներկայիս կը փութայ հրաւիրել քաղաքիս արդոյ հայ հասարակութիւնը, յառաջիկայ կիրակէ, 11 յունիս, ի ժամ 10 առաւօտեան, առ ի խորհրդակցութիւն ի ստորո. նշանակեալ կարեւոր խնդրոյ:

Ա. Շինութիւն Ս. եկեղեցւոյ շէրջափակին:

Բ. Նորագութիւն Ազգական վարժարանի:

Գ. Կարգադրութիւնք ազգային երկսեռ վարժարանաց նոր տարեշրջանի առթիւ:

Լիայոյս ենթ որ քաղաքիս պատուարժան ազգայինները պիտի փութան անձամբ պատասխանել հրաւերիս. ներկայ գտնուելով նոյն օրը որոշեալ ժամուէր յԱզգ. Սորհորդարան:

Ի գիմաց Թաղ. Սորհորդոյ Ատենադպր Ատենապետ Ն. Գ. Քիսսուկեան Խ. Ազնաւուրեան Վառնա 6 յունիս 1904 (Կնի՛ք)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

«Յայտն թերթը կրմանայ թէ Աւստրիական կառավարութիւնը խլիստ նօթս.յով մը Թուրքիայէն պահանջած է շտապել բարենորոգումները Մակեդոնիոյ մէջ իրագործել:

— Թրքական պաշտօնական տեղեկութիւններու համաձայն մինչեւ օրս Մակեդոնիոյ և Ատրիանապոլսի նահանգին պուլկար գաղթականներէն 10, 886 հոգի վերագարձեր են իրենց տեղերը:

— Թրքական տեղեկութիւններու համաձայն Մակեդոնիոյ մէջ մակեդոնացի յեղափոխական մայրահեղ տարրին յեղափոխական գործունէութեան վերսկսումը արգիւնք է օտար շրջանակներու ազդեցութեան, որոնք կրսն թէ անընդհատ խլրտումներով միայն կարելի է Մակեդոնիոյ ինքնավարութիւնը ստանալ:

— Իսկիւպէն, Էտիրնէէն և ուրիշ տեղերէ եկած տեղեկութիւններու համեմատ բէտիֆիներու արձակումը կանոնաւոր կեր-

պով տեղի կուեննայ. մինչեւ օրս 20 վաշտի շափ արդէն արձակուած են:

— 14/1 յունիս Վ. Պօլսէն կը հեռագրեն Ն. Պ. Պին:

Հայոց պատրիարք Օրմանեանի բողոքագրին Բ. Գուռը պատասխանեց գրով մը. ո՛ւր Մուշի և Սասունի մէջ պատահածների ամբողջ պատասխանատւութիւնը հայերու վրայ կը ձգէ, բոլոր բնարարութիւնները անոնց կը վերագրէ, բոլոր քաղաքացիական և զինուորական պաշտօնեաներու վարմունքը օրինաւոր եղած ըլլալը մասնաւոր կ'ընէ և կը յայտարարէ թէ՛ չի կրնար տեսնել պատրիարքը, որ գահին և երկրին անձնուիրութիւն կը պարտի և ինչը պետական պաշտօնեաները մեղադրել:

— Նոյն թերթին կը հեռագրեն Մուշի առաջնորդ Գնել Եպիսկոպոսը, որ իրաւունք էր ստացեր իր առողջութեան համար Կ. Պօլիս երթալ. Տրապիզոնի մէջ վարէ գրում. Ա. յո կարգադրութիւնը, որով անոր Կ. Պոլիս լինելը կ'արգիլուի, այն նպատակն ունի, որ որ եւ է միջոց անհնար դարձուի Գնել Եպիսկոպոսին օտար պիտութեանց քաղաքականութեան հետ յարաբերութեան մտնելու:

ՌՈՒՍՈՒ

Մեծ իշխան Պօրիս, մայր կայսրուհու պահանջումով և Սարին հրամանով պատերազմի վայրէն արտօրուած է Արխանկելաք, որովհետեւ հիւանդանոցներուն մէջ ծառայող ողորմած քորիներն հետ սիրահարութիւններով կը զբաղուէին:

— Քաղան քաղաքի մայր եկեղեցիին մէջ գտնուող ուսական Աստուածածիններէն ամենէն հերաշագործ համարուած պատկերը, որ շատ մեծագին բան մըն էր, եկեղեցիէն զոչոցուած է:

Կրսուի թէ թաթարները զոչոցած են և այդ առթիւ ուսանելուն և թաթարներուն միջեւ ընդհարում տեղի ունեցեր է. երկու կողմէն ալ սպաննուածներ և վիրաւորուածներ կան:

— Կանձակի փոխ նահանգապետը սպանուած է:

— Պերլինի թերթերը կրմանան թէ ռուս Կարմիր Խուշի ընկերութեան մէջ քսան միլիոն ֆրանկի գողութիւն տեղի ունեցեր է:

— Քաղանէն Պերլին կը հեռագրեն թէ րացի Աստուածածնայ հրաշագործ պատկերէն, զոչոցուած են նաեւ Քրիստոսի և Ս. Նիկողոսի պատկերները թանկադին շրջանակներով:

— Գոչոցուած պատկերները տաս միլիոն ռուբլի կարծեն:

— Պերլինէն յունիս 3ին կը

հաղորդեն որ ռուս հշանաւոր զբոսայէտ Անտօն Չեխով մեռեր է Պատէն Վէլէրի մէջ:

— «Յայտն թերթը կը հաղորդէ որ իշխան Պօրիսի և Քուրօբաթի միջեւ եղած ընդհարումին պատճառը հետեւեալն է. Քուրօբաթին կրմանայ որ իշխանին կը նկերակցի ֆրանսուհի Քօքօթ մը, որը սպայի մը ուղակցութեամբ ի նպատակ ճարտնացիներու լրտեսութիւն կրնէ:

Քօքօթը կը փախի, սպանան նասպան կըլլայ, ի մասնաւոր պիտի ձերբակալուի:

Քուրօբաթին Եպիսկոպոսի Յարին հեռագրով կրմացնէ վերջինս իշխանը ետ կը կանչէ:

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Չիֆուէն ստացուած տեղեկութիւններու համաձայն Նոտգու չօրաւարին ամբողջ չօրքը Բօրի Արթուրին քով կը գտնուի:

Ռուսները ճարտնացոց լքեք Վ. Բօրթ-Արթուրի արտաքին բոլոր ամբողջութիւնները, և իրենք նորերը կը շինեն:

— Պերլինի թերթ մը կը հաղորդէ որ ճարտնացիները Աղուսի ծոցին քով 30,000 լորք ցամաք հաներ են:

— Մուկաէնէն կը հաստատեն չօրավար Ռէնէնկա մֆի վիրաւորուելը:

— Բէօթէրի գոծակալութիւնը Խիէնցիներէ կրմանայ թէ ճարտիւ պաշտօնապէս Չիւստոսիս առաջարկեր է որ ստանձնէ Մանուրիոյ վարչութիւնը:

— Տէլլ Թէլլի-Կի Բեթերսպուրի թղթակիցը կը հաղորդէ որ այնտեղ զինուորական շրջանակներու մէջ կը կարծուի որ Քուրօբաթին Լիաօ գետի քովի վճռողական ճակատամարտի պիտի բռնուի ճարտնացիներու հետ: Եւ յիշ ճակատամարտը շատ կատարի պիտի ըլլայ որովհետեւ ճարտնական երեք չօրաբանակներն ալ պիտի մասնակցին: Քուրօթի 105 հազար զինուորով և 226 թնդանօթով. Ոքուն 65 հազար զինուորով և 254 թնդանօթով. Իսկ Նոտգու 80 հազար զինուորով և 180 թնդանօթով: Ուրեմն ամբողջը 250 հազար զինուորով և 660 թնդանօթով պիտի յարձակին Քուրօբաթին վրայ: Վերջինիս կացութիւնը քորթի թրական կը համարուի:

Отговорникъ Мурадъ-Ераносянъ

Печатница «Взаимность» Варна